Պարոն/Տիկին _____ ին

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ.Մեսրոպյան _____

«15» 12 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Գործուղվող անձանց անունը, ազգանունը՝**

- Կամո Սարգսյան,
- Արա Նռանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

- հանձնաժողովի անդամ,
- հանձնաժողովի անդամ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ 2025 թվականի դեկտեմբերի 3-4-ը, Բելգիայի քաղաք Բրյուսել:

4. Հրավիրող կողմը՝ Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիա (WAREG):

5. Գործուղման նպատակը՝ Մասնակցել Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիայի 36-րդ լիագումար նիստին:

6. Քննարկված թեմաները՝ Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիայի հերթական լիագումար նիստի ընթացքում քննարկվեցին ասոցիացիայի անդամների համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներ, ինչպես նաև ասոցիացիայի գործունեությանը և բյուջեին առնչվող մի շարք հարցեր:

Միջոցառման ընթացքում WAREG-ի լիիրավ անդամ է ընտրվել Սլովակիան, իսկ Ռումինիան ստացել է դիտորդի կարգավիճակ: WAREG նախագահողը ներկայացրել է ասոցիացիայի եռամյա ռազմավարությունը, որը հաստատվել է անդամների կողմից:

Ըստ վերոնշյալ ռազմավարության կազմակերպության անդմակցության վճարները բոլոր անդամների համար կբարձրացվեն հետագա երեք տարիների ընթացքում:

Հանձնաժողովը ներկայացրել է ջրային ոլորտի կարգավորման իր առաջնահերթությունները, մասնավորապես՝ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված

ջրային ռեսուրսների նվազումը, որը կարևոր խնդիր է ոչ միայն Հայաստանի, այլև եվրոպական այլ երկրների համար, ինչպես նաև ջրամատակարարման համակարգին նոր սպառողների միացման հետ կապված խնդիրները: Վերջինների մասով ակնկալվում է WAREG-ի կողմից լավագույն փորձի վերլուծություն և համապատասխան առաջարկությունների ներկայացում: Հանձնաժողովի ներկայացուցիչները առաջարկել են այս առաջնահերթությունները ներառել կազմակերպության եռամյա ռազմավարությունում: Այս համատեքստում քննարկվել է նաև առաջիկայում սպառողների շահերին առնչվող խնդիրների վրա կենտրոնանալու հարցը՝ WAREG-ում գործող աշխատանքային խմբերից մեկի շրջանակում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ WAREG-ի որոշ անդամ-կարգավորողներ իրականացնում են նաև քաղաքային աղբահանության կարգավորման գործառույթներ, ներկայացվել է քաղաքային աղբահանության վերաբերյալ կարճ զեկույց: Զեկույցի արդյունքների հիման վրա առաջարկվել է հետագա հանդիպումների ընթացքում քննարկել այս թեման WAREG-ի աշխատանքներում ներառելու հնարավորությունը:

7. Հանդիպումները, ելույթները՝ Հանդիպումներ են կայացել WAREG-ի նախագահ՝ Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի նախագահ Վերա Էիրոյի հետ, ասոցիացիայի անդամ հանդիսացող երկրների պատվիրակների հետ, ինչպես նաև ասոցիացիայի քարտուղարության հետ՝ WAREG-ի 37-րդ լիագումար նիստը Երևանում կազմակերպելու հնարավորության մանրամասները քննարկելու նպատակով: Հանդիպման ընթացքում քննարկված նյութերը հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://www.wareg.org/36th-general-assembly-brussels/:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները՝ Լիագումար նիստի ընթացքում որոշվեց, որ Հանձնաժողովը Երևանում կիյուրընկալի WAREG-ի 37-րդ լիագումար նիստը՝ 2026 թվականի ապրիլին, ինչի մասով առաջարկում ենք շարունակել ակտիվ համագործակցությունը WAREG-ի քարտուղարության հետ՝ հանդիպման օրակարգը և այլ կազմակերպչական հարցերը քննարկելու նպատակով:

Կամո Սարգսյան ---------- 15.12.2025թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)

Արա Նռանյան ---------- 15.12.2025թ.

(ստորագրությունը, ամսաթիվը)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով__

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 891-ՀՆ, 06.10.2025թ.Հրաման 1027-ՀՆ, 29.10.2025թ.**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Արա Նռանյան,**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Կամո Սարգսյան,**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք. Բրյուսել / Բելգիա /**

5. Գործուղման ժամկետները **02.12.2025-05.12.2025թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Արա Նռանյան	Կամո Սարգսյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	10,331	14,311	24.642
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	206,622	286,222	492.844
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	206	136.35	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	92,002	60,612	
	Օրերի քանակը	3	3	
	Ընդամենը (դրամ)	165,603	181,837	347.440
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	126	126	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	56,273	56,273	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	225,091	225,091	450.182
Այլ ծախսեր	Հակահամաճարակայի ն նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		607.647	707.461	1,315.108

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 15.12.2025թ.